

ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՕՏ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ (ՀՕՏԸ)

Ա. ՆԱԽԱԲԱՆ

Բ. ՀՕՏ-ին ԱՌՆԶՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Գ. ՏԵՂԱԲՆԻԿՆԵՐԻ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐ

Դ. ՀՕՏԸ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ե. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ե.1 Հողի օտարման և տարաբնակեցման մասին Հայաստանի Հանրապետության օրենքները և կանոնակարգերը

Ե.2 Սոցիալական պաշտպանության քաղաքականության ոչ կամավոր տարաբնակեցման շրջանակներում ԱԶԲ-ի մոտեցումները

Ե.3 ՀՕՏ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների և կանոնակարգերի համեմատությունը ԱԶԲ-ի Սոցիալական պաշտպանության քաղաքականության հետ

Ե.4 ՀՕՏԸ-ի՝ սույն ԲՖԳ-ի համար որդեգրված սկզբունքները և իրավունքները

Զ. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Զ.1 Ընտրվելու իրավունքը/իրավասությունը

Զ.2 Փոխհատուցում ստանալու իրավունքները

Զ.3 Միավորի փոխհատուցման արժեքի գնահատումը

Զ.4 Սեփականության օտարման պայմանները

Զ.5 Օրինականացման պայմանները

Է. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ը. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Թ. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Թ.1 ՏԿՆ/ԻԳ

Թ.2 Խորհրդատուները

Թ.3 Տեղական ինքնակառավարման մարմինները

Թ.4 Այլ կառույցներ և հաստատություններ

Թ.5 ԱԶԲ

Ժ. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԺԱ. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԺԱ.1 Ներքին մոնիտորինգ

ԺԱ.2 Արտաքին մոնիտորինգ

ԺԲ. ՀՕՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԺԳ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ԺԴ. ՀՕՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Աղյուսակներ.

- Աղյուսակ 1. ՀՕՏ-ի վերաբերյալ Հայաստանի օրենքների և կանոնակարգերի համեմատությունը ԱԶԲ-ի Սոցիալական պաշտպանության քաղաքականության հետ
- Աղյուսակ 2. Իրավունքների սխեմա
- Աղյուսակ 3. Բողոքների լուծման գործընթացը

Պատկերներ.

Պատկեր 1. ՀՕՏ կազմակերպչական կառուցվածքը և գործողությունները

Շրջանակներ

ՇՐՋԱՆԱԿ 1. ՀՕՏ-Ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հավելվածներ.

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ՏԻՊԱՅԻՆ ՀՕՏԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԶԲ Ասիական Զարգացման Բանկ
- ԱԵԱ Ազդեցության ենթարկված անձ
- ԱԵՏՏ Ազդեցության ենթարկված տնային տնտեսություն
- ԱՄՄ Անկախ մոնիտորինգ իրականացնող մարմին
- ԱԱՀԳ Աղքատության և սոցիալական հարցերի նախնական գնահատում
- ԱԱՀԳ Աղքատության և սոցիալական հարցերի գնահատում
- ԲՖԳ Բազմափուլ ֆինանսավորման գործիք
- ԳՄ Գործադիր մարմին
- ԻԳ Իրականացնող գործակալություն
- ԾԻԿ Ծրագրի իրականացման կազմակերպություն
- ԾԿԽ Ծրագրի կառավարման խորհուրդ
- ԾՆՏԱ Ծրագրի նախապատրաստման տեխնիկական աջակցություն
- ՀԿ Հասարակական կազմակերպություն
- ՀՕՏ Հողի օտարում և տարաբնակեցում
- ՀՕՏԾ Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
- ՀՕՏԾ Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
- ՄՏՎ Մարզպետարանի տրանսպորտի վարչություն
- ՊՖՀ Պարբերական ֆինանսավորման հայտ
- ՍՏՄ Սոցիալական և տարաբնակեցման մասնագետներ
- ՍՏՈՒ Սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն
- ՎԶՀ Վնասի չափման նպատակով իրականացված մանրամասն հետազոտություն
- ՏԾ Տարաբնակեցման ծրագիր
- ՏԿՆ Տրանսպորտի և կապի նախարարություն

ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ (ՀՕՏ) ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԱՀՄԱՆՈՒՄԸ

Փոխհատուցում - Օտարված գույքի վերականգնման արժեքի վճարում կամ ծախսերի փոխհատուցման այլ եղանակով:

Իրավունքներ - Փոխհատուցում, եկամտի վերականգնում, տեղափոխման աջակցություն, եկամտի փոխարինում և վերաբնակեցում ներառող այն միջոցառումների ամբողջությունը, որոնք պետք է տրամադրվեն ազդեցության ենթակա անձանց՝ կախված նրանց կորուստների բնույթից՝ նրանց տնտեսական և սոցիալական հիմքերը վերականգնելու համար:

Տեղաբնիկներ - Ասիական զարգացման բանկի «Տեղաբնիկների քաղաքականություն» փաստաթղթում կիրառվող «տեղաբնիկ» հասկացությունը միաչափ չէ և այն ներառում է նաև այլ հասկացություններ: «Ազգային փոքրամասնություններ» հասկացությունը մեկն է այն հասկացություններից, որոնք առնչվում են «տեղաբնիկ» հասկացության հետ և ներկայացված են ԱԶԲ քաղաքականության մեջ: Մյուս հասկացություններն են՝ «մշակութային փոքրամասնություն», «տեղաբնիկ մշակութային համայնք», «տոհմ, ցեղատեսակ», «բնիկ» և «տեղացի»: Ընդունված կամ նախընտրելի հասկացությունները և սահմանումները տարբեր երկրներում տարբեր են: «Տեղաբնիկ» հասկացությունը կիրառվում է Միավորված ազգերի կազմակերպության փաստաթղթերում, և ԱԶԲ-ն այն օգտագործում է միայն նպատակահարմարությունից ելնելով: Հայաստանում «ազգային փոքրամասնություն» հասկացությունն առավել տեղին է: Այդ տեսանկյունից, ԱԶԲ Տեղաբնիկների քաղաքականության համատեքստում «ազգային փոքրամասնություն» ասելով պետք է հասկանալ «սոցիալական և մշակութային յուրահատուկ ինքնություն ունեցող մարդկանց, որոնք տարբերվում են գերիշխող կամ մեծամասնություն կազմող հասարակությունից, ինչն էլ նրանց խոցելի է դարձնում՝ զարգացման գործընթացներում անտեսված/անցանկալի լինելու առումով»:

Հյուրընկալող բնակչություն - Այն տարածքին մոտ գտնվող համայնքը, ուր ծրագրի շահառուները որպես ծրագրի մաս պատրաստվում են կամավոր կերպով վերաբնակվել:

Բարելավումներ - Անձի, տնտեսության, հաստատության կամ կազմակերպության կողմից կառուցված շինություններ (բնակարան, ցանկապատ, ցախանոց, գոմ, կոմունալ շինություն, խանութ, պահեստ և այլն) և ցանված մշակաբույսեր:

Հողի օտարում - Այն գործընթացը, որի միջոցով կառավարական գերատեսչությունները ստիպում են անձին փոխհատուցման դիմաց պետական կարիքների համար օտարել իր ունեցած հողը կամ հողի մի մասը և տալ կառավարական գերատեսչությանը որպես սեփականություն:

Ազդեցության ենթարկված անձ (ԱԵԱ) - Ցանկացած անձ, ով ազդեցության է նթարկվում նախագծից բխող հողօգտագործման, ջրօգտագործման, այլ բնական ռեսուրսների օգտագործման փոփոխություններից կամ եկամտի կորստից:

Ազդեցության ենթարկված տնային տնտեսություն (ԱԵՏՏ) - Մեկ տանիքի տակ բնակվող բոլոր անդամները, որոնք գործում են որպես մեկ տնտեսական միավոր: Ազդեցության ենթարկված տնային տնտեսությունը կարող է բաղկացած լինել մեկ հիմնական ընտանիքից կամ ընդլայնված ընտանիքային խմբից: Սա փոխհատուցում/վերականգնում (ռեաբիլիտացիա) ստացող կարևորագույն միավոր է:

Ռեաբիլիտացիա/վերականգնում - Ոչ կամավոր տարաբնակեցման քաղաքականության շրջանակներում տրամադրված փոխհատուցում, որը օտարված գույքի փոխհատուցման արժեքի վճարում չի ենթադրում:

Վերաբնակեցում - ԱԵԱ/ԱԵՏՏ ֆիզիկական տեղահանումը նախքան նախագծի իրականացումը նրա բնակավայր հանդիսացող վայրից:

Փոխարինման արժեք - Այն արժեքը, որը գնահատվում է որպես հողի համար արդարացի փոխհատուցում՝ հիմնվելով դրա բերքատվության պոտենցիալի վրա, շենքերի և շինությունների

փոխարինման արժեքը (շինանյութերի և աշխատուժի տվյալ պահի շուկայական իրական գինը՝ առանց ամորտիզացիոն մասհանումների կամ վերաօգտագործվող շինանյութի համար մասհանումների), ինչպես նաև բնակելի տարածքների, բերքի, ծառերի և այլ ունեցվածքի շուկայական արժեքը:

Տարաբնակեցում - բոլոր այն միջոցառումները, որոնք նախատեսված են մեղմացնելու համար ՏԱ-երի սեփականության և/կամ ապրուստի վրա նախագծի թողած բացասական որևէ ազդեցությունը. ներառում է փոխհատուցումը, վերաբնակեցումը, եթե այն անհրաժեշտ է, և վնասված/քանդված ենթակառուցվածքների և սարքավորումների վերականգնումը:

Մարզ - Համայնք - Հայաստանը բաժանված է 10 մարզերի. Երևան քաղաքը որպես երկրի մայրաքաղաք հատուկ վարչական կարգավիճակ ունի: 10 մարզերից յուրաքանչյուրը ղեկավարվում է մարզպետի կողմից, որը նշանակվում է ՀՀ կառավարության կողմից: Մարզերը բաղկացած են համայնքներից: Յուրաքանչյուր համայնք ինքնակառավարվող է և բաղկացած է մեկ կամ ավելի բնակավայրերից: Բնակավայրերը դասակարգվում են որպես քաղաք կամ որպես գյուղ: 2007թ. դրությամբ Հայաստանում կա 915 համայնք, որոնցից 49-ը համարվում են քաղաքային և 866-ը՝ գյուղական: Երևանը, որը նախկինում մարզի կարգավիճակ ուներ, ներկայումս ունի համայնքի կարգավիճակ և ղեկավարվում է ընտրովի քաղաքապետի կողմից:

ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ա. ՆԱԽԱԲԱՆ

1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) համար մշակված սույն Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը (ՀՕՇ) մշակվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ) կողմից (Ծրագրի նախապատրաստման տեխնիկական աջակցության խորհրդատու՝ ճապոնական ՊԱՂԵԿՕ ընկերությունը տեխնիկական աջակցություն է տրամադրել ՀՕՇ մշակման ընթացքում): Սույն փաստաթուղթը մանրամասն անդրադառնում է ծրագրի շրջանակներում համապատասխան ենթածրագրերով հողի օտարման և տարաբնակեցման խնդիրների պլանավորման և իրականացման մեխանիզմներին, գործընթացներին և փոխհատուցման իրավունքներին: Ծրագիրը, որը կֆինանսավորվի Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից Բազմափուլ ֆինանսավորման գործիքով (ԲՖԳ) և կիրականացվի 5 տարվա ընթացքում ՏԿՆ-ի՝ որպես գործադիր մարմնի (ԳՄ) և Ծրագրի իրականացման կազմակերպության՝ որպես Իրականացնող գործակալության (ԻԳ) հետ, բաղկացած է 3 փուլից, որոնցից յուրաքանչյուրը կներառի տարբեր ենթածրագրեր, այդ թվում նաև՝ ճանապարհների և մայրուղիների վերականգնման կամ կառուցման աշխատանքներ:

2. Նախքան Ծրագրի հաստատումը սույն ՀՕՇ-ն կթարգմանվի հայերեն և հասանելի կլինի ՏԿՆ կայքում: ՀՕՇ անգլերեն տարբերակը կտեղադրվի ԱԶԲ կայքում:

Բ. ՀՕՏ-ին ԱՌՆԶՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3. Հիմնվելով ԲՖԳ գործընթացների վրա՝ Ծրագրի հաստատումը իրականացվում է առաջին փուլի հաստատման հետ: Հաջորդ փուլերը կհաստատվեն ԳՄ կողմից ԱԶԲ Պարբերական ֆինանսավորման հայտ (ՊՖՀ) ուղարկելուց հետո, որը պետք է պարունակի փուլի շրջանակներում նախատեսված յուրաքանչյուր ենթածրագրի վերջնական փաստաթղթերը և տեխնիկական ուսումնասիրությունները:

4. Ինչ վերաբերում է ՀՕՏ խնդիրներին՝ ԲՖԳ առաջին փուլի, հաջորդ փուլերի ՊՖՀ հաստատման և յուրաքանչյուր փուլի ՀՕՏ պահանջող ենթածրագրի իրականացման համար կպահանջվեն հետևյալ փաստաթղթերը.

- (i) Ամբողջ ֆինանսական գործիքի համար մշակված ՀՕՇ, որը կիրառելի է բոլոր ենթածրագրերի նկատմամբ: Առնվազն տարին մեկ անգամ և որպես կանոն՝ յուրաքանչյուր փուլի մշակման սկզբում ՀՕՇ-ն պետք է վերանայվի, անհրաժեշտության դեպքում թարմացվի և ներկայացվի ԱԶԲ-ի հաստատմանը:
-) (ii) Աղքատության և սոցիալական հարցերի նախնական գնահատում (ԱՍՀՆԳ), որը յուրաքանչյուր փուլի համար ներկայացնում է ՀՕՏ ազդեցությունների հավանականությունը (ազդեցության տեսակը, հնարավոր ծավալները) և թե արդյոք կան տեղաբնիկներ և որքանով նրանք ազդեցության կենթարկվեն դրանից:
- i) (ii) Եթե պահանջվում է ՀՕՏ, ապա ԲՖԳ փուլի յուրաքանչյուր ենթածրագրի ՀՕՏ ծրագիր (ՀՕՏՕ)՝ աշխատանքային նախագծերի հիման վրա և ազդեցության ծավալներին համապատասխան: Հիմնվելով ԱԶԲ-ի Գործառնական ձեռնարկի (ԳՁ) F1/ԳՁ (2009) վրա՝ նախագիծը դասակարգվում է որպես Կարգ Ա, եթե 200 հոգուց ավելի մարդ զգալի ազդեցություն է կրում (վերաբնակեցում կամ իրենց արտադրական գույքի 10%-ից ավելի կորուստ): Ծրագիրը դասակարգվում է որպես Կարգ Բ, եթե զգալի ազդեցություններից տուժում է 200 հոգուց պակաս մարդ, իսկ այն ծրագրերը, որոնք ՀՕՏ ազդեցություն չեն ենթադրում դասակարգվում են որպես Կարգ Գ-ի ծրագրեր: ՀՕՏՕ-ն պետք է ներառի փոխհատուցման և վարչարարության մանրամասն բյուջեներ և ՀՕՏ ինդիկատորները շինարարական աշխատանքների սկզբի հետ կապող իրականացման ժամանակացույց:
- 5. Հիմնվելով ԱԶԲ-ի 2009 թվականի Սոցիալական պաշտպանության քաղաքականության և գործելակերպի վրա՝ ԲՖԳ-ի և դրա յուրաքանչյուր փուլի հաստատումը, ինչպես նաև այդ փուլերի ենթածրագրերի հաստատումը հիմնված կլինեն ՀՕՏ-ին առնչվող հետևյալ պայմանների վրա.
 -) (i) ԲՖԳ/առաջին փուլի հաստատում. Պայմանավորված է՝ ա) ամբողջ ԲՖԳ-ի համար ԱԶԲ և կառավարության կողմից ընդունելի ՀՕՇ-ի մշակմամբ և տարածմամբ, բ) ԱՍՀՆԳ մշակմամբ և գ) յուրաքանչյուր փուլի ՀՕՏ պահանջող ենթածրագրի համար ԱԶԲ և կառավարության կողմից ընդունելի ՀՕՏՕ-երի մշակմամբ և հրապարակմամբ:
 - i) (i) Հաջորդող փուլերի ՊՖՀ հաստատում. Պայմանավորված է՝ ա) ՀՕՇ-ի վերանայմամբ/թարմացմամբ/հրապարակմամբ և բ) վերանայված ՀՕՇ-ին համահունչ և ԱԶԲ-ի ու կառավարության կողմից ընդունելի ՀՕՏՕ-երի մշակմամբ/հրապարակմամբ:
 - ii) (i) Պայմանագրերի ստորագրում (ՀՕՏ ներառող ենթածրագրերի համար). Պայմանավորված է՝ ա) իրականացման ենթակա ՀՕՏՕ-երի թարմացմամբ և հրապարակմամբ և բ) Անկախ մոնիտորինգ իրականացնող գործակալության (ԱՄԳ) վարձմամբ, որը պատրաստ կլինի սկսելու աշխատանքը:
 - (i) Կապալառուներին աշխատանքների շարունակման ծանուցման ուղարկում.
 - v) Պայմանավորված է համապատասխան ենթածրագրի ՀՕՏՕ-ի լրիվ իրականացմամբ (փոխհատուցման լրիվ տրամադրում և ռեաբիլիտացիայի լրիվ իրականացում)՝ փաստագրված ԱՄԳ համապատասխանության հաշվետվությամբ:

Գ. ՏԵՂԱԲՆԻԿՆԵՐ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐ

6. Տեղաբնիկների վրա Ծրագիրը ոչ մի ազդեցություն չի ունենալու: ՀՕՏՕ-ում ներառված միջոցառումների միջոցով հատուկ ուշադրություն է պետք դարձնել ոչ բարենպաստ պայմաններում գտնվող մարդկանց խմբերի (հող չունեցողներ, աղքատներ, կանանց կողմից ղեկավարվող տնտեսություններ, ծերեր և հաշմանդամներ) կարիքների բացահայտմանն ու դրանք հաշվի առնելուն, և ֆինանսական փոխհատուցումից բացի՝ փորձել բարելավել նրանց ապրուստի միջոցները:

Դ. ՀՕՏՕ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

7. ՀՕՏ ներառող ենթածրագրերի համար ՀՕՏ մշակման գործողությունները պետք է կազմեն փուլի ենթածրագրերի անբաժան մաս՝ սկսած ՀՕՏ ուսումնասիրության աշխատանքներից և վերջացրած աշխատանքային նախագծի վրա հիմնված իրականացման ենթակա ՀՕՏ-ով: ՀՕՏ-ի պատրաստման ընթացակարգը հետևյալն է.

i Ճանապարհների ուղեգծման և լայնական կտրվածքների նախնական նախագծի կազմումից հետո ՏԿՆ/ԻԳ-ի հետ միասին կիրականացնեն նախնական կադաստրային հետազոտություն՝ ազդեցության ենթակա սեփականությունը և դրա սեփականատերերին/օգտագործողներին բացահայտելու նպատակով:

i i Կառավարության որոշումից հետո ՏԿՆ/ԻԳ-ը և ծրագիրը նախապատրաստող խորհրդատուները կիրականացնեն դաշտային մանրամասն հետազոտություններ, որոնք ներառում են հողին և այլ գույքին պատճառված վնասի չափման նպատակով իրականացված մանրամասն հետազոտություն (ՎՉՀ), բոլոր ԱԵՏՏ-երի և ԱԵԱ ցուցակագրում/հաշվառում, ինչպես նաև անկախ գնահատողների օգնությամբ՝ բոլոր ազդեցության ենթակա գույքի գնահատում՝ փոխհատուցման/ռեաբիլիտացիայի ամփոփ բյուջեի կազմման նպատակով:

ii i ԱԶԲ պահանջներին համապատասխանելու նպատակով՝ ծրագրի նախապատրաստման խորհրդատուները կիրականացնեն սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն (ՍՏՈԻ) ԱԵՏՏ 25% ընտրանքի հիման վրա: ՍՏՈԻ-ն պետք է պարունակի ազդեցության ենթակա բնակչության բոլոր հիմնական սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների բնութագրերը (էթնիկ կազմը, կրթամակարդակը, կենսամակարդակի ապահովման ձևերը և եկամտի աղբյուրները, աղքատության/եկամտի մակարդակները, ինչպես նաև բնակելի տան տեսակը/արժեքը և հողի սեփականության ձևը): ՍՏՈԻ-ի երկրորդ նպատակն է բացահայտել լրացուցիչ աջակցության կարիք ունեցող բնակչության խոցելի և ռիսկային խմբերին՝ որպես հիմք ՀՕՏ-ի բյուջեի մշակման համար:

v i Այս հետազոտությունների հիման վրա կձևավորվի ՀՕՏ-ը: Հետազոտությունների ընթացքում բոլոր ԱԵՏՏ մանրամասնորեն կտեղեկացվեն ՀՕՏ-ով նախատեսված բոլոր պայմանների և միջոցառումների վերաբերյալ՝ ներառյալ ծրագրի ազդեցությունները, փոխհատուցման դրույքաչափերը և ժամանակացույցը: ՎՉՀ-ն, ԱԵԱ ցուցակագրումը և փոխհատուցման գումարները կվերանայվեն և անհրաժեշտության դեպքում կթարմացվեն աշխատանքային նախագծի ամփոփումից հետո:

8. ՀՕՏ մշակման/իրականացման գործընթացը. Ծրագրի առաջին փուլի համար ՀՕՏ-ն պետք է մշակվի Ծրագրի նախապատրաստման տեխնիկական աջակցության (ՄՆՏԱ) խորհրդատուների կողմից: Հետագա փուլերի համար այս նույն աշխատանքները պետք է իրականացվեն ՏԿՆ/ԻԳ և աշխատանքային նախագծերը մշակող խորհրդատուների կողմից: ՀՕՏ իրականացումը պետք է վերահսկվի վերահսկիչ խորհրդատուների կողմից: ՀՕՏ մշակումը/իրականացումը պետք է կատարվի ըստ հետևյալ ընթացակարգի.

ա. ՀՕՏ մշակում. Այս փուլը պետք է իրականացվի ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրությանը զուգընթաց (ՀՕՏ-ի տիպային նկարագրի համար տես՝ Հավելված Ա):

բ. ՀՕՏ վերանայում/ամփոփում. Այս փուլն իրականացվելու է աշխատանքային մանրամասն նախագծի պատրաստման ընթացքում և ներառելու է ազդեցությունների/ԱԵԱ մասին տվյալների հնարավոր թարմացումը, փոխհատուցման դրույքաչափերի հնարավոր վերանայումները և հնարավորության դեպքում՝ ԱԵԱ կարգավիճակի օրինականացման աշխատանքները: ԱԶԲ-ի կողմից վերջնական ՀՕՏ-ի հաստատումից հետո կստորագրվեն շինարարական աշխատանքների պայմանագրերը:

գ. ՀՕՏ իրականացում. Այս փուլը կսկսվի ՀՕՏ-ի վերջնական տարբերակի հաստատումից հետո և կավարտվի բոլոր ԱԵԱ պատշաճ փոխհատուցման տրամադրմամբ:

դ. Շինարարական աշխատանքների իրականացում. Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կսկսվեն միայն ԱԵԱ փոխհատուցման տրամադրումից և անկախ մոնիտորինգ իրականացնող գործակալության (ԱՄԳ) կողմից համապատասխանության վերաբերյալ հաշվետվության պատրաստումից հետո: Այնուամենայնիվ, եթե ճանապարհի վրա կան հատվածներ, որտեղ ազդեցություն չի ակնկալվում, և որոնք բավականաչափ մեծ են շինարարության տնտեսական նպատակահարմարությունը հիմնավորելու համար, այդ հատվածներում շինարարական աշխատանքները կարող են սկսվել պայմանագրերի ստորագրումից անմիջապես հետո: Նման դեպքերում ազդեցությունների բացակայությունը պետք է ներկայացվի հատուկ հաշվետվությամբ:

Ե. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ե.1 Հողի օտարման և տարաբնակեցման մասին Հայաստանի Հանրապետության օրենքները և կանոնակարգերը

9. ՀՀ Սահմանադրությունը (1995) երաշխավորում է մասնավոր սեփականատիրության իրավունքների պաշտպանությունը: Միաժամանակ այն հայտարարում է, որ մասնավոր սեփականությունը կարող է սահմանափակվել «հասարակական շահերի գերակայության բացառիկ դեպքերում», հաստատված ընթացակարգի և նախապես տրամադրված համարժեք փոխհատուցման հիմքերով: Հողի օտարման և փոխհատուցման ընդհանուր բնույթի հարցերը քննարկված են ՀՀ հողային օրենսգրքի (2001թ.) 102, 104, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (1998թ.) 218 հոդվածում, ինչպես նաև ՀՀ Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենքում (2006թ., նոյեմբերի 27):

10. Համաձայն ՀՀ Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենքի ՀՀ կառավարությունը որոշում է կայացնում բացառիկ գերակա հանրային և պետական շահի ճանաչման վերաբերյալ՝ հիմնվելով համապատասխան պետական գործակալության հայցի վրա: Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման մեջ նշվում են՝

ա) այն բացառիկ՝ գերակա հանրային շահը, որի համար պետք է օտարվի սեփականությունը.

բ) օտարվող սեփականության ձեռքբերողը.

գ) օտարման ենթակա սեփականության իրավունքի օբյեկտները (գտնվելու վայրը կամ այլ տվյալներ, որոնցով տվյալ սեփականությունը տարբերվում է այլ սեփականությունից).

դ) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետները:

11. ՀՀ Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենքը քննարկում է իրավական կարգավիճակ ունեցող հողօգտագործողների և անշարժ գույքի սեփականատերերի՝ հասարակական նպատակներով հողի և այլ սեփականության օտարման և փոխհատուցման ընթացակարգային հարցերը: Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմինը կազմում է օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունը, որին իրավունք ունեն մասնակցելու ձեռքբերողը, սեփականատերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները, եթե սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ արձանագրությունը չի կազմվել: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմվելուց հետո ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն

արձանագրությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, այն բողոքարկել լիազոր մարմին կամ դատարան:

12. Օտարման ենթակա հողի/սեփականության փոխհատուցումը հաստատվում է ՏԿՆ և ԱԵԱ միջև կնքվող պայմանագրով՝ հաշվի առնելով շուկայական արժեքը և վնասները, ներառյալ հետևանքային վնասները, և կարող է լինել հողի/սեփականության փոխանակման ձևով: Օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» (Հոկտեմբեր 4, 2005թ.) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ե.2 Սոցիալական պաշտպանության քաղաքականության ոչ կամավոր տարաբնակեցման շրջանակներում ԱԶԲ-ի մոտեցումները

13. Ոչ կամավոր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Ոչ կամավոր տարաբնակեցումից պետք է հնարավորինս խուսափել կամ առնվազն այն հասցնել նվազագույնի:

- Փոխհատուցման/ռեաբիլիտացիայի չափը պետք է ապահովի ԱԵԱ՝ ծրագրի իրականացումից առաջ ունեցած կենսամակարդակը:

- ԱԵԱ պետք է լիարժեք տեղեկություններ և խորհրդատվություն տրամադրվի ՀՕՏ-ի փոխհատուցման տարբերակների մասին:

- ԱԵԱ սոցիալ-մշակութային կառույցներին (ինչպիսիք են՝ գրադարանները, համայնքային կենտրոնները, մշակույթի տները) պետք է հնարավորինս աջակցություն ցուցաբերվի: Դրանք պետք է առավելագույնս ներգրավվեն:

- Փոխհատուցումը պետք է իրականացվի կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքով:

- Իրավական կարգավիճակի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման և/կամ ռեաբիլիտացիայի գործընթացի իրականացման համար:

- Առանձնահատուկ ուշադրության պետք է արժանանան կանանց կողմից ղեկավարվող տնտեսությունները և այլ խոցելի խմբերը: Նրանց պետք է համապատասխան աջակցություն ցուցաբերվի իրենց կարգավիճակը բարելավելու համար:

- ՀՕՏ-ը պետք է ընկալել և իրագործել որպես ծրագրի մաս, և փոխհատուցման ծախսերը պետք է ամբողջությամբ ներառվեն ծրագրի օգուտներ-ծախսեր հաշվարկներում:

- Փոխհատուցումը ու տարաբնակեցման հատկացումները պետք է ամբողջությամբ տրամադրվեն նախքան ճանապարհի օտարման գոտու հողի հարթեցման և քանդման իրավունքի տալը:

Ե.3 ՀՕՏ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների և կանոնակարգերի համեմատությունը ԱԶԲ-ի Սոցիալական պաշտպանության քաղաքականության հետ

14. Հայաստանի Հանրապետության օրենքների և կանոնակարգերի և ԱԶԲ-ի քաղաքականության միջև առկա տարբերությունները ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: ՀՕՏ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների և կանոնակարգերի համեմատությունը ԱԶԲ-ի Սոցիալական պաշտպանության քաղաքականության հետ

<p align="center">Հողային հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենքներն ու կանոնակարգերը</p>	<p align="center">ԱԶԲ-ի Սոցիալական պաշտպանության քաղաքականությունը</p>
<p>Հողի դիմաց փոխհատուցում նախատեսված է միայն հողի՝ իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերերի համար:</p>	<p>Հողի սեփականության վերաբերյալ իրավական կարգավիճակի բացակայությունը չպետք է խոչընդոտի փոխհատուցման և/կամ ռեաբիլիտացիայի գործընթացի իրականացմանը: Իրավական կարգավիճակ չունեցող հողօգտագործները նույնպես պետք է ստանան փոխհատուցում:</p>
<p>Օրագրով պատճառված վնասի/քանդման դիմաց փոխհատուցում է նախատեսվում միայն անշարժ գույքի պետական կադաստրում գրանցված տների/շինությունների համար: Չգրանցված առևտրային շինությունների համար փոխհատուցում չի նախատեսվում:</p>	<p>Համաձայն ԱԶԲ քաղաքականության՝ գրանցում չունեցող առևտրային շինություններին ծրագրով պատճառված վնասի/քանդման դիմաց ևս տրամադրվում է փոխհատուցում:</p>
<p>Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է միայն հողի հաշվառված սեփականատերերին:</p>	<p>Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է բոլոր ԱԵԱ:</p>
<p>Հողի գնահատումը հիմնվում է ընթացիկ շուկայական արժեքի վրա և փոխհատուցումն իրականացվում է շուկայական արժեքի 15 տոկոսի հավելումով:</p>	<p>Հողի գնահատումը հիմնվում է ընթացիկ շուկայական դրույքաչափերի/փոխարինման արժեքի վրա:</p>
<p>Ազդեցության հնարավոր չափի/արժեքի, փոխհատուցման ու ֆինանսական աջակցության գումարների, ինչպես նաև նրանց իրավունքների վերաբերյալ տեղեկությունները պետք է տրամադրվեն ազդեցության ենթարկված անձանց նախքան գնահատման իրականացումը:</p>	<p>Նույնը:</p>
<p>Էականորեն ազդեցության ենթարկված անձանց և խոցելի խմբերի համար եկամտի/ապրուստի միջոցների վերականգնման միջոցառումներ, փոխհատուցման</p>	<p>ԱԶԲ-ի քաղաքականությամբ էական կորուստների դեպքում պահանջվում է եկամտի/ապրուստի միջոցների վերականգնում, ինչպես նաև և ԱԵԱ կողմից վերաբնակեցման ընթացքում կրած ծախսերի հատուցում:</p>

Հողային հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենքներն ու կանոնակարգերը	ԱԶԲ-ի Սոցիալական պաշտպանության քաղաքականությունը
կամ տարաբնակեցման ծախսեր նախատեսված չեն:	

15. Ընդհանուր առմամբ, ՀՕՏ-ը վերաբերող ՀՀ օրենքների/կանոնակարգերի և ԱԶԲ քաղաքականության միջև սկզբունքային տարբերություններ չկան: Այնուամենայնիվ, ՀՀ օրենքները և կանոնակարգերը հստակ չեն սահմանում, թե ինչպես պետք է իրականացվի ԱԵԱ վերականգնումը: Մեկ այլ խնդիր է այն, որ համաձայն ԱԶԲ քաղաքականության փոխհատուցման կամ առնվազն վերականգնման իրավունք ունեն սեփականության իրավունք ունեցող և չունեցող անձինք, ինչպես նաև գրանցված և չգրանցված բնակիչները: ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության այս տարբերությունները վերացնելու նպատակով ՏԿՆ Ծրագրի համար մշակել է սույն ՀՕՏ-ն՝ ապահովելով բոլոր օբյեկտների համար փոխարինման արժեքին համարժեք փոխհատուցում, իսկ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչների, չգրանցված բիզնես ունեցողների համար իրավունքների վերականգնման միջոցառումների ապահովում: ՀՕՏ-ը նախատեսում է նաև վերականգնողական փաթեթներ այն ԱԵԱ համար, ովքեր վերաբնակեցվելու են, քանի որ նրանք համարվում են խոցելի և էական ազդեցություն կրող ԱԵԱ:

16. Մասնավոր սեփականություն հանդիսացող հողն առաջին հերթին անհրաժեշտ է փորձել օտարել ազդեցության ենթարկված անձանց հետ բանակցությունների հիման վրա: Եթե բանակցությունները ձախողվում են, պետք է կիրառել հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավունքը և սկսել սեփականազրկման գործընթացը:

Գործարքի շուրջ բանակցության դեպքում ԱԶԲ պահանջում է պատշաճ մանրամասն վերահսկում, որպեսզի ԱԵԱ տրամադրվի արդարացի գումար, տեղեկատվություն, ինչպես նաև բանակցությունների համար բավարար ժամանակ և որպեսզի այդ դեպքերը մոնիտորինգի ենթարկվեն անկախ արտաքին կառույցի կողմից: Այս պայմանները լիովին երաշխավորված են ԱՄԳ ընդգրկման միջոցով (Տես Բաժին ԺՄ) և ՀՀ կառավարության գործելակերպով, համաձայն որի միավորի փոխհատուցման դրույքաչափերը գնահատվում են անկախ գնահատողների կողմից:

Ե.4 ՀՕՏ-ի՝ սույն ԲՖԳ-ի համար որդեգրված սկզբունքները և իրավունքները

17. Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ԱԶԲ Սոցիալական պաշտպանության քաղաքականության (2009թ.) հիման վրա սույն ԲՖԳ-ի համար մշակվել են ոչ կամավոր տարաբնակեցման հիմնական սկզբունքները, որոնք հետևյալն են.

- Հողի օտարումից և ոչ կամավոր տարաբնակեցման այլ հետևանքներից պետք է հնարավորինս խուսափել կամ դրանք հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով ծրագրի նախագծերի բոլոր այլընտրանքային կենսունակ տարբերակները,
- Եթե հնարավոր չէ խուսափել այդ հետևանքներից, ապա անհրաժեշտ է ժամանակացույց ունեցող ՀՕՏԾ, և ԱԵԱ պետք է աջակցություն ցուցաբերվի, որպեսզի նրանք բարելավեն կամ առնվազն վերականգնեն ծրագրից առաջ ունեցած կենսամակարդակը,
- Պետք է ապահովել ԱԵԱ փոխհատուցման վերաբերյալ խորհրդատվության և տարաբնակեցման վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև ենթածրագրերի պլանավորմանն ու իրականացմանը նրանց մասնակցությունը,

- Խոցելի և էական ազդեցության ենթարկված անձանց պետք է ցուցաբերել հատուկ աջակցություն,
- Իրավական կարգավիճակ չունեցող ԱԵԱ (օրինակ՝ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները կամ որևէ ազատ տարածք ինքնակամ զավթած անձինք, կամ էլ այն ԱԵԱ, որոնց հաշվառման վերաբերյալ տվյալներ առկա չեն) պետք է ստանան հողի դիմաց փոխհատուցման փոխարեն ապրուստի միջոցի նպաստ, և հողից բացի՝ այլ կորուստների դիմաց լիարժեք փոխհատուցում,
- Այն ԱԵԱ, ում կարգավիճակը կարելի է օրինականացնել, պետք է օրինական կարգավիճակ ստանան, և նրանց կորուստները պետք է ամբողջությամբ փոխհատուցվեն,
- Պետք է տրամադրվի եկամուտը վերականգնելու հնարավորություն,
- ՀՕՏ-ն պետք է ԱԵԱ տրամադրվի հայերեն լեզվով,
- Փոխհատուցման վճարումը և տարաբնակեցման աջակցությունը պետք է ամբողջությամբ տրամադրվեն և վերականգնողական միջոցառումները պետք է ամբողջությամբ իրականացվեն նախքան կապալառուի կողմից հողի փաստացի ֆիզիկական տնօրինումը և նախքան որևէ կոնկրետ փաթեթի հիման վրա շինարարական աշխատանքներ սկսելը, և
- Պետք է լինեն բողոքների քննարկման համապատասխան մեխանիզմներ, որոնցով կլուծվեն ԱԵԱ բողոքները, եթե այդպիսիք լինեն:

2. ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

18. Ծրագրի շրջանակներում ՀՕՏ-ի առաջադրանքները պետք է իրականացվեն փոխհատուցում ստանալու համար իրավունակության և այլ իրավունքների շրջանակին համապատասխան, որը համահունչ է ինչպես Հայաստանի օրենքներին և կանոնակարգերին, այնպես էլ ԱԶԲ-ի քաղաքականությանը: Փոխհատուցման ենթակա արժեքի որոշման համար հիմք է ծառայում գույքի շուկայական արժեքը, իսկ այն դեպքերում, երբ գույքի կադաստրային արժեքը գերազանցում է շուկայական արժեքին՝ ապա հիմք է ընդունվում կադաստրային արժեքը: Իրավունքների ամփոփ սխեմայի նկարագիրը ներկայացված է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2: Իրավունքների սխեմա

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
1. Գյուղատնտեսական հողերի վերջնական կորուստ	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողերը անկախ ազդեցության աստիճանից	Մեփականատեր	Փոխհատուցում՝ փոխարինման արժեք +15%՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է), կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող	վերականգնումը: ԱԵԱ հնարավորության դեպքում պետք է ստանան օրինական կարգավիճակ և փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:
		Վարձակալ (համայնքային, պետական)	Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի «շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%
		Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա հողօգտագործող	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:
2. Ոչցյուղատնտեսական հողեր	ԱԵՏՏ-ներ, որոնք կորցնում են իրենց	Սեփականատեր	Փոխհատուցում՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
	առևտրային նշանակության կամ բնակելի հողերը		(որն ավելի բարձր է)+15%, կամ փոխանակում ԱԵՏՏ համար ընդունելի մեկ այլ հողակտորով
		Իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող	Փոխհատուցումը կիրականացվի վերը նշված ձևով:
		Վարձակալ (համայնքային, պետական)	Վարձակալը պետք է ստանա փոխհատուցում որպես լիարժեք սեփականատեր՝ շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի «շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ գումարած 15%»-ին համարժեք փոխհատուցում հետևյալ մասնաբաժիններով՝ 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) >25տարի՝ հողի արժեքի 25%
		Իրավական կարգավիճակ ստանալու ոչ ենթակա հողօգտագործող	Այս ԱԵՏՏ-ները կստանան վերականգնման նպաստ ազդեցության ենթարկված հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է)՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:
3. Բնակելի կառույցներ		Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		սեփականության իրավական գրանցման կարգավիճակից	արժեքը + 15% չափով առանց ամորտիզացիոն մասնահատումների և գործարքային ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ համաձայնությամբ՝ փոխհատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Վերաբնակեցվող վարձակալ	Վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպաստ՝ նշված սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում:
4. Ոչ բնակելի կառույցներ/գույք		Իրավական գրանցման կարգավիճակ ունեցող ԱԵՏՏ	Շինության կորստի դեպքում՝ փոխհատուցում փոխարինման արժեքը + 15%: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտի-զացիոն մասնահատումների և գործարքի համար ծախսերի: Մասնակի ազդեցության դեպքում և ԱԵՏՏ-ի համաձայնությամբ՝ փոխ-հատուցում տրամադրվում է շինության միայն ազդեցության ենթակա հատվածի, ինչպես նաև շինության վերանորոգման համար:
		Իրավական գրանցման կարգավիճակ չունեցող ԱԵՏՏ	Փոխհատուցումը կիրականացվի վերոհիշյալ սկզբունքով, կառույցի օրինականացման/գրանցման դեպքում:
		Վերաբնակեցվող վարձակալ	Վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպաստ՝ սույն աղյուսակի ստորև բերված 9 և 10 կետերում
5. Ընդհանուր սեփականության միջոցներ	Համայնքային/ պետական գույք	Համայնք/պետություն	Համայնքի/պետության իրավասու մարմնի համաձայնությամբ կորցրած

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			կառույցների վերակառուցում և նրանց գործառույթների վերականգնում:
6. Բերք	Ազդակիր Ազդեցության ենթակա բերքի զանգված	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Բերքի փոխհատուցում հաշվարկված շուկայական գներով՝ ակնկալվող համախառն բերքի համար:
7. Շառեր	Ազդեցության ենթակա ծառեր	Բոլոր ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Շուկայական գներով հաշվարկված՝ բերքի արժեքի դրամական փոխհատուցում՝ հիմնված ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:
8. Ձեռնարկատիրություն/ գործարարություն	Ձեռնարկատերեր/գործարարներ	Բոլոր ԱԵԱ/ԱԵՏՏ-ները՝ անկախ իրավական գրանցման կարգավիճակից (ներառյալ իրավական կարգավիճակ ստանալու ենթակա սեփականատեր և կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները)	Ձեռնարկատեր/անհատ ձեռներեց. ա) (մշտական ազդեցության դեպքում) միանվագ փոխհատուցում տարեկան զուտ եկամտի չափով, բ) (Ժամանակավոր ազդեցության դեպքում) զուտ եկամտի փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության ընդհատման մինչև 1 տարի ժամանակահատվածի համար: Փոխհատուցումը հիմնված է հարկային հայտարարագրի

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
			<p>վրա: Հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵՏՏ-ը կստանա վերականգնման նպաստ առավելագույն չհարկվող աշխատավարձի չափով՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատվող ամիսների հաշվարկով՝ մինչև 1 տարի: Առավելագույն չհարկվող աշխատավարձը հավասար է նվազագույն աշխատավարձին: Մշտական աշխատողներ/աշխատակիցներ. ա) (մշտական ազդեցության դեպքում) վեց ամսվա կորցրած նվազագույն աշխատավարձի չափով գումարի տրամադրում, բ) (Ժամանակավոր ազդեցության դեպքում) մինչև վեց ամիս նվազագույն աշխատավարձի չափով գումարի տրամադրում՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով:</p>
9. Օժանդակություն էականազդեցությունների դեպքում	Գյուղատնտեսական եկամտի 10 և ավելի տոկոսի կորուստ կամ վերաբնակեցում	Էականորեն ազդեցության ենթարկված բոլոր ԱԵՏՏ, ներառյալ կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչները	<p>1) Ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողի մեկ տարվա բերքի չափով միանվագ փոխհատուցում: 2) 6 ամսվա վերաբնակեցման նպաստ վերաբնակեցման համար՝ նվազագույն աշխատավարձի չափով:</p>
10. Օժանդակություն վերաբնակեցման դեպքում	Տրանսպորտի և տեղափոխումների ծախսեր	Տեղահանված բոլոր ԱԵԱ, ներառյալ վարձակալները	Տրանսպորտային և մեկ ամսվա համար կենսապահովման ծախսերը հոգալու համար բավարար գումարների տրամադրում:
11. Օժանդակություն խոցելի անձանց		Աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող և (կամ) կանանց և (կամ)	6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով դրամական օժանդակության տրամադրում: Ծրագրի իրականացման հետ կապված

Կորստի տեսակը	Նկարագրություն	Ազդեցության ենթարկված անձինք	Փոխհատուցում ստանալու իրավունքները
		տարեց անձանց կողմից ղեկավարվող ԱԵՏՏ	աշխատատեղերի համար ընտրություն կատարելիս այս անձանց պետք է առաջնայնություն տալ:
12. Ժամանակա-վոր ազդեցություն		Բոլոր ԱԵՏՏ	Պատշաճ վարձակալություն և վերա-կանգնման աջակցություն կտրամադրվի ժամանակավոր ազդեցություն կրող գույքի/սեփականության համար:
13. ՀՕՏ չնախա-տեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն			Ծրագրի իրականացման ընթացքում ՏԿՆ կանդիդատներն ազդեցություններին և կհոգադրանք հետ կապված փոխհատուցումը, ըստ վերոհիշյալ պայմանների:

Ձ.1 Ընտրվելու իրավունքը/իրավասությունը

19. Մույն ծրագրի շրջանակներում փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող կամ իրավունքների վերականգնման/ռեաբիլիտացիայի վերաբերյալ դրույթներից օգտվելու իրավունք ունեցող ԱԵԱ են.

- Իրավական կարգավիճակ ունեցող /այդ թվում նաև՝ սեփականության իրավունքով/ և չունեցող հողօգտագործողները:
- Հաշվառված և ոչ լիարժեք գրանցում ունեցող վարձակալները չհաշվառված կենվորները և բնավարձակալները:
- Շինությունների, բերքի, բույսերի կամ հողին ամրացված այլ առարկաների սեփականատերերը, և
- Այն ԱԵԱ, որոնք ձեռնարկատիրական գործունեության առումով կորուստ են կրում, կորցնում են եկամուտը:

20. Փոխհատուցում ստանալու համար իրավունքը պետք է սահմանափակվի վերջնաժամկետով, որը սահմանվում է յուրաքանչյուր ենթածրագրի շրջանակներում օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմման օրը: Այն ԱԵԱ-ները, ովքեր բնակություն են հաստատում կամ նոր բարելավումներ են կատարում ազդեցության տարածքներում վերջնաժամկետից հետո, փոխհատուցման համար իրավունակություն չունեն: Այնուամենայնիվ, նրանց պետք է նախօրոք ծանուցում ուղարկել՝ ինդիկատորներով նախքան ծրագրի իրականացումը ազատել տարածքները և քանդել կառույցները: Նրանց քանդած կառույցների շինանյութը չի բռնագրավվում, նրանք որևէ տուգանք չեն վճարում, և նրանց նկատմամբ որևէ պատժամիջոց չի կիրառվում:

Ձ.2 Փոխհատուցում ստանալու իրավունքները

21. Հողի, տան և եկամտի կորուստ կրող ԱԵԱ վերաբերող իրավունքի դրույթները և վերականգնման լրահատկացումները պետք է ներառեն հողի, շինությունների, բերքի և ծառերի մշտական և ժամանակավոր կորստի վերաբերյալ դրույթներ, վերաբնակեցման լրահատկացում, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության առումով կորստի նպաստ՝ հարկերի մասին հայտարարագրերի և/կամ միանվագ գումարների հիման վրա: Այս իրավունքները մանրամասնեցված են ստորև.

• **Գյուղատնտեսական նշանակության հողերի վրա ազդեցությունը** կփոխհատուցվի՝ շուկայական արժեքով ա) դրամական ընթացիկ շուկայական արժեք կամ եթե կադաստրային արժեքը ավելի բարձր է, ապա կադաստրային արժեք, գումարած 15% օժանդակություն: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը, բ) ԱԵԱ կողմից ընդունելի կորցրած հողամասին համարժեք բերքատվություն ունեցող հողով փոխարինելու միջոցով: Հողի անուղղակի ազդեցություն կրող հատվածները, որոնք Ծրագրի ազդեցությունից հետո դարձել են դժվարամատչելի կամ մշակման համար անպիտան ևս կներառվեն հողի ազդեցության ենթակա հատվածի մեջ: Եթե ազդեցության է ենթարկվել ԱԵԱ գյուղատնտեսական նշանակության հողի ավելի քան 10%-ը, ԱԵԱ (սեփականատերերը, վարձակալները և բնավարձակալները) պետք է *էական ազդեցության* համար լրացուցիչ նպաստ ստանան, որը համարժեք է կորցրած հողից ստացված տարեկան համախառն եկամտի շուկայական արժեքին: Գործարքի հարկերը և վճարները պետք է վճարվեն ԳՄ-ի կողմից, կամ էլ դրանց վճարում ընդհանրապես չպետք է պահանջվի:

Այն ԱԵԱ, որոնց **կարգավիճակը ենթակա է օրինականացման**, օրինական կարգավիճակ պետք է ստանան, և նրանց կորուստները ամբողջությամբ պետք է փոխհատուցվեն այնպես, ինչպես իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերերինը: Այն ԱԵԱ, որոնց **կարգավիճակը ենթակա չէ օրինականացման**, պետք է միանվագ վերաբնակեցման նպաստի տեսքով փոխհատուցում ստանան, որը կհաշվարկվի հիմք ընդունելով հողօգտագործման անցած տարիները և ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքը (որն ավելի բարձր է) հետևյալ կերպ՝ 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:

Վարձակալը պետք է օրինականացվի և ստանա լիարժեք փոխհատուցում՝ վերոհիշյալ սկզբունքով կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեք (որն ավելի բարձր է) արժեքին գումարած 15%-ին համարժեք փոխհատուցում կախված վարձակալության մնացած տարիների թվից՝ հետևյալ կերպ՝ ա) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ը, բ) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը, գ) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը, դ) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%-ը:

• **Ոչ գյուղատնտեսական (բնակելի/առևտրային նշանակության) հողեր. Իրավական կարգավիճակ ունեցող ԱԵԱ** կփոխհատուցվեն փոխարինման արժեքով՝ ա) շուկայական արժեք/գումարած 15% օժանդակություն: Հողի շուկայի բացակայության դեպքում փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով հողի տարեկան արտադրողականությունը՝ հաշվարկված տարիների այն քանակով, որը կապահովի ԱԵՏՏ-ի կորցրած հողի դիմաց վերականգնումը, բ) ԱԵԱ կողմից ընդունելի հողակտորի տեսքով: Հողի անուղղակի ազդեցություն կրող հատվածները, որոնք Ծրագրի ազդեցությունից հետո դարձել են դժվարամատչելի կամ մշակման համար անպիտան ևս կներառվեն հողի ազդեցության ենթակա հատվածի մեջ:

Այն ԱԵԱ, որոնց կարգավիճակը ենթակա է օրինականացման, օրինական կարգավիճակ պետք է ստանան, և նրանց կորուստները ամբողջությամբ պետք է փոխհատուցվեն այնպես, ինչպես իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերերինը: Այն ԱԵԱ, որոնց կարգավիճակը ենթակա չէ օրինականացման, պետք է միանվագ վերաբնակեցման նպաստի տեսքով փոխհատուցում ստանան, որը համարժեք է ազդակիր հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է)՝ հողօգտագործման անցած տարիների հաշվարկով. 1) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%, 2) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%, 3) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%, 4) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%:

Վարձակալը պետք է օրինականացվի և ստանա լիարժեք փոխհատուցում՝ վերոհիշյալ սկզբունքով կամ նրան պետք է տրվի նոր վարձակալություն: Եթե դա հնարավոր չէ, ապա, ելնելով վարձակալության մնացած տարիների հաշվարկից, նա պետք է ստանա ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային (որն ավելի բարձր է) արժեքին գումարած 15%-ին համարժեք փոխհատուցում կախված վարձակալության մնացած տարիների թվից՝ հետևյալ կերպ՝ ա) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ը, բ) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը, գ) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը, դ) 25 և ավելի տարի՝ հողի արժեքի 25%-ը:

● **Բնակելի շինությունների և կառույցների** համար փոխհատուցում պետք է տրամադրվի փոխարինման արժեքով + 15% օժանդակություն՝ անկախ ԱԵԱ գրանցման կարգավիճակից: Այնուամենայնիվ, գրանցում չունեցող ԱԵԱ պետք է օրինականացնեն իրենց շինությունը՝ փոխհատուցում ստանալու նպատակով: Փոխհատուցումը տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասնահանումների և գործարքի համար ծախսերի՝ անկախ ազդեցության ենթարկված առարկայի հաշվառման կարգավիճակից: Մասնակիորեն ազդեցություն կրելու դեպքում և այն դեպքում, երբ սեփականատերը չի ցանկանում տեղափոխել շինությունը, ազդեցությունները կընդգրկեն միայն շինության ազդեցության ենթարկված մասը և այդ մասի լիարժեք վերականգնումը շահագործման համար պիտանիության նախկին վիճակին: Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպաստ (տես ստորև):

● **Ոչ բնակելի շինությունների և կառույցների** համար ևս փոխհատուցում կտրամադրվի վերոհիշյալ ձևով միայն այն ազդեցության ենթարկված անձանց, ովքեր օրինական կարգով գրանցել են իրենց սեփականությունը (տես նախորդ կետը): Ազդեցության ենթարկված անձինք, ովքեր չունեն շինության/կառույցի գրանցում նույնպես կփոխհատուցվեն, բայց միայն դրանց օրինականացումից և գրանցումից հետո: Գրանցում չունեցող ԱԵԱ իրենց շինությունն օրինականացնելու համար պետք է վճարեն օրինականացման համար պահանջվող գումարները: Վերաբնակեցվող վարձակալներին կտրվի վերաբնակեցման և էական ազդեցություն կրելու նպաստ (տես ստորև):

● **Բերք.** Մեկ տարվա բերքի համախառն արժեքի շուկայական ընթացիկ դրույքաչափերին համապատասխան լռելյայն փոխհատուցում: Բերքի դիմաց փոխհատուցում պետք է ստանան ինչպես սեփականատերերը, այնպես էլ կենվորները՝ իրենց վարձակալության պայմանագրերի հիման վրա:

● **Ծառեր.** Շուկայական դրույքաչափերին համապատասխան փոխհատուցում՝ հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:

● **Ձեռնարկատիրական գործունեություն.** Եթե ձեռնարկատիրական գործունեության տվյալ հնարավորությունը կորում է մշտապես, դրա դիմաց տրամադրվում է մեկ տարվա գուտ եկամտին համարժեք փոխհատուցում՝ հարկերի մասին հայտարարագրերի հիման վրա: Ձեռնարկատիրական գործունեության տվյալ հնարավորության ժամանակավոր կորստի դեպքում փոխհատուցում տրամադրվում է ամսական եկամտի չափով, հարկերի մասին հայտարարագրի հիման վրա՝ ձեռնարկատիրական գործունեության ընդհատված ամիսների հաշվարկով: Հարկերի

մասին հայտարարագրի բացակայության դեպքում ԱԵԱ կփոխհատուցվի վերոնշյալ սկզբունքով առավելագույն չհարկվող աշխատավարձի գումարի չափով (նվազագույն աշխատավարձ):

● **Սշտական ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավված աշխատողներ.** Ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ժամանակահատվածում առավելագույնը վեց ամսվա կորցրած աշխատավարձերի փոխհատուցում:

● **Վերաբնակեցման լրահատկացում.** Այն ԱԵԱ, որոնք հարկադրված են վերաբնակեցվել, պետք է ստանան տրանսպորտային և մեկ ամսվա ապրուստի ծախսերի համար բավարար վերաբնակեցման լրահատկացում:

● **Համայնքային կառույցներ և կենցաղային ծառայություններ.** Ամբողջությամբ պետք է փոխարինվեն կամ վերականգնվեն այնպես, որ կարողանան իրականացնել ծրագրից առաջ ունեցած գործառույթները:

● **Օժանդակություն էական ազդեցությունների դեպքում.** Այս օժանդակությունը տրամադրվում է այն ԱԵՏՏ, որոնք կորցնում են գյուղատնտեսական եկամտի 10 և ավելի տոկոս (տես վերևում), կամ վերաբնակեցվող ԱԵՏՏ (ներառյալ վարձակալներին):

● **Խոցելի անձանց կենսապահովում.** Խոցելի անձանց (աղքատության սահմանագծից ցածր կենսամակարդակ ունեցող ԱԵՏՏ, կանանց կամ տարեց մարդկանց կողմից ղեկավարվող տնտեսություններ) կտրվի նվազագույն աշխատավարձի չափով վեց ամսվա օժանդակություն, ինչպես նաև Ծրագրի շրջանակներում նախատեսվող աշխատատեղերում աշխատելու համար գերակայություն:

2.3 Միավորի փոխհատուցման արժեքի գնահատումը

22. Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Տարբեր առարկաների՝ միավորի դիմաց փոխհատուցման արժեքի գնահատման ԱԶԲ մեթոդաբանությունը հետևյալն է.

- (i) Գյուղատնտեսական նշանակության հողը պետք է գնահատվի շուկայական դրույքաչափերով՝ հաշվի առնելով ազդեցության ուսումնասիրությունից մեկ տարի առաջ տեղի ունեցած հողի վաճառքի ուսումնասիրությունները:
- (ii) Տները/շինությունները պետք է գնահատվեն փոխարինման արժեքով՝ շինության տեսակի, շինանյութերի արժեքի, շինարարության տեսակի, աշխատուժի, տրանսպորտի և այլ շինարարական ծախսերի հիման վրա: Ամորտիզացիոն մասհանումներ կամ գործարքի դիմաց ծախսեր չեն կիրառվում: Եթե ԱԵԱ չի ցանկանում տեղափոխվել, ապա վճարումները կկատարվեն մասնակի ազդեցությունների՝ միայն շինության ազդեցության ենթարկված մասի կամ վերանորոգման համար:
- (iii) Տարեկան բերքատվության չափը պետք է գնահատվի առաջին տարվա բերքատվության գյուղատնտեսական արտադրանք արտադրողի՝ շուկայական զուտ դրույքաչափերով: Այն հնարավոր դեպքում, երբ ԱԵԱ վճարման ենթակա է ավելի քան մեկ տարվա փոխհատուցում, առաջին տարուց հետո բերքի դիմաց փոխհատուցում պետք է տրամադրվի շուկայական համախառն արժեքին համապատասխան:
- (iv) Ծառերը պետք է գնահատվեն տարբեր մեթոդաբանությամբ՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք կորցրած ծառը փայտանյութ տվող ծառ է, թե պտղատու:
 - ա. Փայտանյութ տվող ծառերը պետք է գնահատվեն տարիքի կարգի հիման վրա (ա) տնկիներ, բ) միջին հասունության ծառեր և գ) հասուն ծառեր), ինչպես նաև փայտի որակի ու ծավալի հիման վրա:
 - բ. Պտղատու ծառերը պետք է գնահատվեն տարիքի հիման վրա (ա) տնկիներ, բ) հասուն ոչ պտղատու ծառեր և գ) հասուն պտղատու ծառեր): «ա» և «բ» կարգի ծառերի դիմաց

փոխհատուցում պետք է տրամադրվի ներդրված արժեքի հիման վրա, «գ» կարգի ծառերի դիմաց՝ այնքան, որքան որ կազմում է մեկ տարվա եկամտի գուտ շուկայական արժեքը՝ բազմապատկած այն տարիների քանակով, որքան անհրաժեշտ է նոր լրիվ պտղատու ծառ աճեցնելու համար:

23. Միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը պետք է գնահատվեն հավաստագրված անկախ գնահատողի կողմից՝ ԱԶԲ-ի կողմից ընդունելի հստակ և թափանցիկ մեթոդաբանության հիման վրա: Փոխհատուցման գնահատված դրույքաչափերն այնուհետ պետք է հաստատվեն և վավերացվեն ՏԿՆ/ԻԳ կողմից:

2.4 Սեփականության օտարման պայմանները

24. Հողի ձեռքբերումը սեփականության օտարման վարույթով կապված է երկար ընթացակարգերի հետ և հաճախ կարող է դիմադրության հանդիպել: Ծրագրի շրջանակներում նման մոտեցմամբ պետք է գործել միայն ծայրահեղ դեպքերում, երբ ԱԵԱ և ՏԿՆ-ի միջև բանակցությունները ձախողվում են, և ենթածրագրի իրագործելու համար չկա մատչելի այլընտրանքային հող: Այնուամենայնիվ, նման դեպքերում, ՏԿՆ-ն չպետք է զբաղեցնի անհրաժեշտ հողամասերը մինչև ա) օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական վարույթ չսկսվի, բ) դատական արգելք չսահմանվի, և դրա մասին ըստ սահմանված կարգի չտեղեկացվի ԱԵԱ և գ) փոխհատուցման/վերականգնման գումարները չմուծվեն պայմանական դեպոզիտային հաշվին:

2.5 Օրինականացման պայմանները

25. Սեփականության իրավունք/գրանցում/փաստաթղթեր չունեցող բոլոր ԱԵԱ կարող են օրինականացնել իրենց գույքը/սեփականությունը, եթե այդ գույքը չի գտնվում այսպես կոչված կարմիր գոտում (վայրեր, որոնք պետականորեն նախատեսված/ ճանաչված են հանրային օգտագործման համար՝ ռազմական նպատակով օգտագործվող տարածքներ, հիվանդանոցներ, դպրոցներ, կամ վայրեր, որոնք նախատեսված չեն բնակության համար (գետի հուն, ռադիոակտիվ նյութերով հարուստ կամ այլ վտանգավոր կամ բնապահպանական տեսանկյունից անհամապատասխան վայրեր)՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի:

Որպեսզի ԱԵԱ օրինականացնեն իրենց ունեցվածքը, անհրաժեշտ է որպեսզի նրանք նախաձեռնեն այդ գործընթացը՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: ԳՄ կաջակցի այն ԱԵԱ, որոնք կսկսեն օրինականացման գործընթացը:

Է. ԳԵՆԴԵՆԱՅԻՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐ

26. Կանայք կարևոր դեր են խաղում ծրագրի ազդակիր տարածքներում և ներգրավվում են գյուղատնտեսական և շուկայավարման եկամտաստեղծ գործողությունների լայն շրջանակում: Ծրագրի շրջանակներում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել կանանց կողմից իրենց գործողություններին առնչվող փոխհատուցման ապահովմանը և հետևել, որպեսզի այն կանայք, ովքեր ընտանիքը փաստացի ղեկավարողն են, հստակորեն ներառված լինեն այն շահառուների ցանկում, որոնց համար վարկի շրջանակներում փոխհատուցում և վերականգնում է նախատեսվում: Վերը նշվածն ապահովելու համար պետք է հաշվի առնել հետևյալ գործողությունները.

- Կանանց ներգրավել ազդեցությունների վերաբերյալ տվյալների հավաքման գործընթացում:

- ԱԵՏՏ-ների/ԱԵԱ վրա ազդեցությունների գնահատում, որը պարունակում է ընտանիքների և մարդկանց ընդհանուր քանակն ըստ սեռի՝ հստակ նշելով, թե քանի կին կարող է ազդեցության ենթարկվել ծրագրի արդյունքում, ինչպես նաև նկարագրել ծրագրից առաջ ունեցած նրանց կենսապայմանները:

- Փոխհատուցման իրավունքները սահմանելու, դրանց շուրջ բանակցելու և ՀՕՏ-ն իրականացնելու համար խորհրդատվական գործընթացներում կանայք պետք է հիմնական մասնակիցներ լինեն:

- ՀՕՏ-ի մոնիտորինգի և գնահատման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել կանանց և այլ խոցելի խմբերի վրա տարաբնակեցման հետևանքներին:

Ը. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

27. ԱԶԲ-ի քաղաքականության համաձայն՝ ԱԵԱ պետք է լիարժեք խորհրդատվություն տրամադրել և հնարավորություն ընձեռել մասնակցելու հողի օտարման և տարաբնակեցման աշխատանքների պլանավորմանը և իրականացմանը: Նրանց նաև պետք է ժամանակին և պատշաճ կերպով տեղեկություններ տրամադրել պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև ՀՕՏ իրականացման ժամկետների և ընթացակարգերի վերաբերյալ: Ծրագրի իրականացման կազմակերպություն (ԾԻԿ) կողմից հողի օտարման և տարաբնակեցման գործընթացի բոլոր փուլերում պետք է իրականացնել հանրային տեղեկատվության և խորհրդատվության քարոզարշավ: Բացի այդ, ԾԻԿ պետք է կազմակերպի նաև հանրային իրազեկման հանդիպումներ՝ ԱԵԱ մասնակցությունը ՎՉՀ-ին, ՏՕ-ի ամբողջական բացահայտումը և ԱԵԱ իրազեկումը փոխհատուցման վճարման և վերաբնակեցման ընթացակարգերի վերաբերյալ ապահովելու նպատակով:

28. ՀՕՏ-ը թարգմանվել է հայերեն և բաշխվել ծրագրում ներառված տարածքներում՝ վերանայման և հաստատման համար: Խորհրդի կողմից հավանության արժանանալուց անմիջապես հետո ՀՕՏ-ը կտեղադրվի ԱԶԲ-ի կայքում: Հետագա փուլերի համար վերանայված ՀՕՏ-ն (եթե դրա անհրաժեշտությունը կա) կհրապարակվի նախքան ԱԶԲ ղեկավարության կողմից յուրաքանչյուր ՊՖՀ-ի դիտարկումը:

29. Ծրագրի տարբեր փուլերում (պլանավորում, իրականացում և մոնիտորինգ) պետք է իրականացնել հետևյալ գործողությունները. ա) բաժանել հասարակության իրազեկման հայերեն բրոշյուրներ և գրքուկներ, բ) ՀՕՏ-ի հայերեն տարբերակները տրամադրել մարզպետարաններին և համայնքապետարաններին և գ) ՀՕՏ-երը տեղադրել ԱԶԲ-ի կայքում:

30. Համայնքային իշխանությունները պետք է իրազեկվեն ծրագրի մասին, և նրանցից աջակցություն պետք է խնդրել ազդեցության ենթակա գույքի հաշվառման/գույքագրման, ԱԵԱ ցուցակագրման և վնասի չափման նպատակով մանրամասն հետազոտության իրականացման հարցում: Բացի այդ, նախքան ՀՕՏ-ն ավարտին հասցնելը և այն ԻԳ ներկայացնելը ԱԵԱ պետք է մանրամասնորեն իրազեկվեն ԱԵԱ ցուցակագրման և ՎՉՀ-ի արդյունքների մասին, և համապատասխանաբար պետք է հաշվի առնվեն նրանց նախապատվությունները փոխհատուցման և տարաբնակեցման համար տրամադրվող այլ աջակցության առումով: ԱԵԱ և այլ շահառուների ակտիվ մասնակցությունն ապահովող գործընթացներն ու մեխանիզմները պետք է մանրամասն ներկայացվեն ՀՕՏ-երում, ներառյալ ժամկետը, մասնակիցների ցուցակը և խորհրդատվական հանդիպումների արձանագրությունները:

Թ. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

31. Ծրագիրը կֆինանսավորվի Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի կողմից: Մույն ՀՕՏ-ում նկարագրված փոխատուցման/վերականգնողական ծրագիրը

ներառում է հստակ գործընթացներ, դինամիկա և տարբեր դերակատարներ: ԾԻԿ կգործի որպես ԻԳ, իսկ ՏԿՆ-ն՝ որպես Գործադիր մարմին (ԳՄ): ԾԻԿ-ը կհիմնադրվի ՏԿՆ կազմում և այն խորհրդատուների աջակցությամբ յուրաքանչյուր ծրագրի համար կմշակի և կիրականացնի ՀՕՏՕ՝ ՀՕՏՇ-ում որդեգրված քաղաքականության և ընթացակարգերին համապատասխան: Մի շարք այլ պետական և ոչ պետական կազմակերպություններ աջակցող դեր կկատարեն ՀՕՏ գործընթացներում: Գործող օրենսդրության համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն պատասխանատու է անշարժ գույքի տիրապետողների, սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և իրավունքների պետական գրանցման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես ներգրավված կլինեն այս գործընթացներում: Նշված կառույցների դերը մանրամասն ներկայացված է ստորև: Ծրագրի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է Պատկեր 1-ում:

Թ.1 ՏԿՆ/ԻԳ

32. ՏԿՆ-ն ընդհանուր գործառույթներ է իրականացնում Ծրագրի համար՝ ներառյալ բոլոր ՀՕՏ աշխատանքների նախապատրաստումը, իրականացումն ու ֆինանսավորումը, ինչպես նաև տարբեր կառույցների գործողությունների համակարգումը: ՏԿՆ-ն իր գործառույթները կիրականացնի ԻԳ և, մասնավորապես, ԾԻԿ միջոցով: ԾԻԿ կազմում կաշխատեն սոցիալական և տարաբնակեցման հարցերով մասնագետներ (ՄՏՄ), որոնք հաշվետու կլինեն ԾԻԿ ղեկավարին ՀՕՏ աշխատանքների պլանավորման և իրականացման ընդհանուր կառավարումն իրականացնելու համար: Ծրագրի վերահսկման և կարևորագույն որոշումների կայացման նպատակով (այդ թվում՝ ԱԵԱ բողոքարկման բացառիկ դեպքերի քննարկման և որոշումների կայացման՝ նախքան գործը դատարան հանձնելը) կձևավորվի նաև Ծրագրի կառավարման խորհուրդ (ԾԿԽ), որը բաղկացած կլինի շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչներից և կղեկավարվի ՀՀ վարչապետի կողմից:

33. ՄՏՄ կունենան հետևյալ պատասխանատվությունները. ա) Համակարգել պետական կադաստրի և տեղական ինքնակառավարման մարմինների ՀՕՏ աշխատանքները, բ) աջակցել խորհրդատուներին քարտեզագրման, ուսումնասիրության և սեփականության կարգավիճակի ստուգման գործում, գ) ՀՕՏՕ-ն ներկայացնել ԱԶԲ վերանայման, դ) տարածել ՀՕՏՕ-ն, ե) պլանավորել և կառավարել ՀՕՏՕ-ի իրականացումը և փոխհատուցման տրամադրման գործընթացը, զ) աջակցություն ցուցաբերել բողոքների դեպքում, է) ապահովել պատշաճ ներքին մոնիտորինգ և ը) ԱԶԲ-ի առաջարկությամբ վարձել արտաքին մոնիտորինգ իրականացնող մարմին: ՄՏՄ նաև պետք է հավաքագրեն և ներկայացնեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ապահովելու համար ՀՕՏ-ի բյուջեների արագ հատկացումը ԱԵԱ, ինչպես նաև համակարգեն ՀՕՏ-ի հետ առնչվող բոլոր գործողությունները:

34. **Մարզպետարանի տրանսպորտի վարչություն (ՄՏՎ).** ՄՏՎ-երը պետք է աջակցեն ԾԻԿ, մասնավորապես ՄՏՄ-ի գործունեությանը և ապահովեն հաղորդակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև աջակցություն ցուցաբերեն բողոքների դեպքում և ԱԵԱ փոխհատուցման տրամադրման գործում: Տեղական ինքնակառավարման մարմինները իրենց հերթին անհրաժեշտության դեպքում պետք է աջակցություն ցուցաբերեն ուսումնասիրությունների, բողոքների դիտարկման ու բավարարման, ինչպես նաև փոխհատուցման տրամադրման գործում:

Թ.2 Խորհրդատուներ

35. ՀՕՏ-ի գործառույթների իրականացմանը կներգրավվեն տարբեր խորհրդատուներ.

ա. ՄՆՏԱ խորհրդատուներ. Դրանց թվում կլինեն ՀՕՏ-ի համար անհրաժեշտ կարողություններ ունեցող միջազգային և տեղական հետազոտական խմբեր, որոնք կիրականացնեն բոլոր դաշտային հետազոտությունները և կնախապատրաստեն անհրաժեշտ ՀՕՏ-երը առաջին փուլի համար:

բ. Նախագծման խորհրդատուներ. Դրանց թվում կլինեն ՀՕՏ-ի համար անհրաժեշտ կարողություններ ունեցող միջազգային և տեղական հետազոտական խմբեր, որոնք կիրականացնեն նույն գործողությունները առաջին փուլի ՀՕՏ-երը թարմացնելու/ավարտին հասցնելու համար և կպատրաստեն ՀՕՏ-երը հաջորդ փուլերի համար:

գ. Վերահսկման խորհրդատուներ. Դրանց թվում կլինեն ՀՕՏ-ի համար անհրաժեշտ կարողություններ ունեցող միջազգային և տեղական հետազոտական խմբեր, որոնք կաջակցեն ծրագրերի ընդհանուր վերահսկմանը: Վերահսկման խորհրդատուները նաև կվերահսկեն ՀՕՏ-ի իրականացումը և ծրագրի հետագա փուլերի համար ՀՕՏ-ի արտաքին մոնիտորինգ և գնահատում կիրականացնեն:

դ. Անկախ մոնիտորինգ իրականացնող մարմին (ԱՄՄ). Այս խորհրդատու կվարձվի ՀՕՏ-ի իրականացման առաջին փուլի արտաքին մոնիտորինգն ու գնահատումն իրականացնելու համար: Վերահսկման խորհրդատուի բացակայության դեպքում ԱՄՄ-ը կշարունակի արտաքին մոնիտորինգ և գնահատում իրականացնել բոլոր փուլերի համար:

ե. Գույքի անկախ գնահատողներ. հավատարմագրված մասնավոր ընկերություններ են, որոնք կվարձվեն ՄՆՏԱ-ի կամ նախագծման խորհրդատուների կողմից՝ օտարման ենթակա գույքը գնահատելու համար:

Թ.3 Տեղական ինքնակառավարման մարմիններ

36. Տեղական ինքնակառավարման մարմինները անմիջական իրավասություններ ունեն հողամասերին առնչվող վարչարարության հարցերում: ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումները կտրամադրեն տեղական հողային ռեգիստրում առկա տվյալները և կապահովեն կապը համայնքների իշխանությունների հետ: Համայնքների իշխանությունները անհրաժեշտության դեպքում կաջակցեն հետազոտությանը, բողոքների հարթմանը, նաև ԱԵԱ խորհրդատվության մատուցմանը և փոխհատուցումների տրամադրմանը:

Թ.4 Այլ կառույցներ և հաստատություններ


37. Մի շարք այլ հաստատություններ նույնպես կմասնակցեն ՀՕՏ աշխատանքների նախապատրաստմանն ու իրականացմանը՝

- (i) **Ֆինանսների նախարարություն.** ՀՕՏ-երի վերջնական պաշտոնական հաստատումից հետո ՀՕՏ-երի իրականացման համար նախատեսված բյուջեները ֆինանսների նախարարությունը կտրամադրի ՏԿՆ-ին:
- (ii) **ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե.** ՀՀ կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն պատասխանատու է հողի սեփականությանը վերաբերող իրավական հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և սեփականության հաշվառման համար:
- (i) **Դատարաններ.** Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացում խնդրահարույց դեպքերի լուծման համար հիմք կհանդիսանա դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը:

Թ.5 ԱԶԲ

38. Ծրագրի պարբերական վերահսկում իրականացնելուց բացի՝ ԱԶԲ-ն վերանայում է բոլոր ՀՕՏԾ-երը և վերացնում պայմանագրերի կնքման և շինարարական աշխատանքները սկսելու բոլոր խոչընդոտները:

Պատկեր 1. ՀՕՏ կազմակերպչական կառուցվածքը և գործողությունները



Ժ. ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

39. Պետք է առկա լինի բողոքների ներկայացման մեխանիզմ, որը հնարավորություն կտա ԱԵԱ բողոքարկել հողամասերի կամ այլ գույքի դիմաց փոխհատուցումից բխող ցանկացած անընդունելի որոշում, գործելակերպ կամ գործողություն: ԱԵԱ պետք է խորհրդատվության, հետազոտության և փոխհատուցման տրամադրման ընթացքում բանավոր կամ գրավոր կերպով լիարժեքորեն իրազեկվեն իրենց իրավունքների և բողոքները ներկայացնելու ընթացակարգերի մասին: Պետք է հոգ տանել առավելապես բողոքների, այլ ոչ թե հետևանքների վերացման մասին: Դրան հնարավոր է հասնել ՀՕՏ-ի ճշգրիտ նախագծման և իրականացման միջոցով՝ ապահովելով ԱԵԱ լիարժեք մասնակցություն և խորհրդատվության տրամադրում, ինչպես նաև ազդակիր համայնքների, ԳՄ-ի և ընդհանուր առմամբ տեղական ինքնակառավարման մարմինների միջև ծավալուն կապ և համակարգում հաստատելով: Բողոքները և դժգոհությունները քննարկվում են ստորև բերված Աղյուսակ 3-ում ներկայացված ընթացակարգով:

Աղյուսակ 3: Բողոքների լուծման գործընթացը

Հողի/բերքի դիմաց փոխհատուցման հարցեր
1. Նախ՝ բողոքներն անհրաժեշտ է փորձել լուծել համայնքի մակարդակով՝ համայնքային ղեկավար մարմինների և ոչ պաշտոնական միջնորդների ներգրավմամբ:
2. Եթե այդպիսով բողոքները չեն լուծվում, դիմում–բողոք կարող է ներկայացվել ՏԿՆ, որն էլ իր հերթին կհասցեագրի դրանք ԻԳ: 15 օրվա ընթացքում ՏԿՆ պետք է հայցը մերժի կամ առաջարկի ԻԳ դրա լուծումը ԱԵԱ կողմից ներկայացված պայմաններով:
3. Եթե ՏԿՆ և ԻԳ միջամտությունից և աջակցությունից հետո բողոքը չի լուծվել, ապա ՏԿՆ այն պետք է ներկայացնի ԾԿԽ՝ բողոքի լուծման կամ դատարան դիմելու վերաբերյալ նրանց որոշումը ստանալու նպատակով: ԾԿԽ-ն պետք է պատասխանի բողոքին դրա գրանցումից հետո 15 օրվա ընթացքում: ԾԿԽ-ի որոշումը պետք է համապատասխանի սույն ՀՕՏ-ի դրույթներին:
4. Եթե բողոքների քննարկման համակարգը չի բավարարում ԱԵԱ բողոքը, նրանք կարող են հայցով դիմել համապատասխան դատարան:

Այնուամենայնիվ, բողոքարկման վերոնշյալ մեխանիզմը չի սահմանափակում քաղաքացու դատարան դիմելու իրավունքը՝ բողոքարկման գործընթացի առաջին իսկ փուլում:

ԺԱ. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

40. Ծրագրի շրջանակներում ՀՕՏ-ի գործառույթները պետք է ենթարկվեն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին մոնիտորինգի: Ներքին մոնիտորինգը պետք է իրականացվի ԻԳ/ՕԻԿ-ի կողմից: Արտաքին մոնիտորինգի իրականացման պարտականությունը պետք է վերապահվի անկախ մոնիտորինգ իրականացնող մարմնին, որը պետք է վարձվի ՏԿՆ-ի և հաստատվի՝ ԱԶԲ-ի կողմից: ԱՄՄ-ը պետք է ընտրվի հասարակական կազմակերպությունների (ՀԿ), գիտական հաստատությունների կամ խորհրդատվական ընկերությունների շրջանակից: ԱԶԲ-ն ծրագրի իրականացման գործընթացը սկսելուց հետո ՏԿՆ-ին խորհրդատվություն կտրամադրի ԱՄՄ-ի տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ:

ԺԱ.1 Ներքին մոնիտորինգ

41. ԻԳ-ը իրականացնում է ընթացիկ ներքին մոնիտորինգ անմիջականորեն կամ խորհրդատուի ծառայությունների միջոցով և արդյունքների մասին տեղեկացնում է ԱԶԲ-ին ծրագրի իրականացման վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների միջոցով: Ներքին

մոնիտորինգի ցուցանիշները պետք է առնչվեն գործընթացին և անմիջական արդյունքներին: Այս տեղեկությունները ստացվում են անմիջապես ՄՏԿ-ից, և դրանց հիման վրա ամսական հաշվետվություններ են ներկայացվում ԻԳ/ՏԿՆ-ին՝ ՀՕՏՕ-ի առաջընթացն ու արդյունքները գնահատելու և անհրաժեշտության դեպքում աշխատանքների ծրագիրը ճշգրտելու համար: Ամսական հաշվետվությունները ամփոփվում են վերահսկողության եռամսյակային տիպային հաշվետվություններում և ներկայացվում են ԱԶԲ-ին: Մոնիտորինգի հատուկ չափորոշիչներն են.

- (i) ԱԵԱ իրազեկման քարտզարշավ և նրանց տրամադրված խորհրդատվություն,
- (ii) Հողի օտարման կարգավիճակ և հողի դիմաց փոխհատուցման վճարներ,
- (iii) Օտարման ենթակա շինությունների և այլ գույքի դիմաց փոխհատուցման տրամադրում,
- (iv) ԱԵԱ վերաբնակեցում,
- (v) Եկամուտների կորստի դիմաց փոխհատուցում,
- (vi) Փոխարինող հողատարածքների ընտրություն և բաշխում, և
- (vii) Եկամուտներ վերականգնման ուղղությամբ գործողություններ:

42. ԻԳ/ՕԻԿ, որը պատասխանատու է ծրագրի տարաբնակեցման գործողությունների ամենօրյա մոնիտորինգի համար, հավաքագրում է վերը նշված տեղեկությունները հետևյալ գործիքների միջոցով.

- ա) Ազդեցության ենթակա մարդկանց ցուցակագրման տվյալների վերանայում,
- բ) ԱԵԱ տրամադրված խորհրդատվություն և ոչ պաշտոնական հարցազրույցներ,
- գ) Առանձին դեպքերի մանրամասն ուսումնասիրություն,
- դ) ԱԵԱ ընտրանքային հետազոտություն,
- ե) Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ և
- զ) Համայնքային հանրային հանդիպումներ:

ԺԱ.2 Արտաքին մոնիտորինգ

43. Արտաքին մոնիտորինգը իրականացվում է յուրաքանչյուր ՀՕՏՕ զուգահեռ և ներկայացվում է եռամսյակային կտրվածքով և ապա՝ վերջնական համապատասխանության հաշվետվությունների տեսքով, որոնք կարտացոլեն փոխհատուցման ծրագրի իրականացման համապատասխանությունը ՀՕՏՕ պայմաններին և ԱԶԲ քաղաքականությանը, ինչպես նաև ի բավարարումն ԱԵԱ: Համապատասխանության հաշվետվությունը կքննարկվի ԻԳ/ՏԿՆ-ի և ԱԶԲ-ի հետ և պայման կհանդիսանա շինարարական աշխատանքները սկսելու համար: Առաջին փուլի արտաքին մոնիտորինգը պետք է իրականացվի ԱՄՄ-ի կողմից, որտեղ ընդգրկված կլինեն ՀԿ-ների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ կամ ԻԳ անկախ խորհրդատուներ: Իսկ հետագա փուլերի մասով արտաքին մոնիտորինգը իրականացվելու է վերահսկողության խորհրդատուի կողմից: Արտաքին մոնիտորինգի առաջադրանքների ցուցանիշներն են՝

- (i) ԻԳ/ՏԿՆ-ի կողմից մշակված ներքին մոնիտորինգի հաշվետվությունների ուսումնասիրություն և հաստատում,
- (ii) Նախապես տեղահանված անձանց հաշվառման/ցուցակագրման ելակետային սոցիալ-տնտեսական տեղեկատվության վերանայում,
- (iii) Ազդեցության ցուցանիշների բացահայտում և ընտրություն,
- (iv) Պաշտոնական և ոչ պաշտոնական ուսումնասիրությունների միջոցով ազդեցության ենթարկված անձանց վրա ազդեցության գնահատում,
- (v) Վերանայման հաշվետվություն մշակելիս ԱԵԱ, պաշտոնյաների, համայնքի ղեկավարների հետ խորհրդակցություններ,
- (vi) Տարաբնակեցման գործընթացի արդյունավետության, ազդեցության և կենսունակության գնահատում՝ տարաբնակեցման հետագա քաղաքականության ձևավորման և

պլանավորման համար:

44. Որպես վերջնական համապատասխանության հաշվետվության մաս ԱՄՄ-ը նաև պետք է գնահատի ծրագրի ազդեցության ենթակա այնպիսի խոցելի խմբերի կարգավիճակը, ինչպիսիք են կանանց կողմից դեկավարվող տնտեսությունները, հաշմանդամները/տարեցները և այն ընտանիքները, որոնց կենսամակարդակը աղքատության սահմանագծից ցածր է: Ծրագրի մոնիտորինգի և գնահատման ցուցանիշների համար հիմք պետք է ծառայի հետևյալը.

- (i) ԱԵԱ սոցիալ-տնտեսական պայմանները տարաբնակեցումից հետո,
- (ii) ԱԵԱ կողմից հետադարձ կապ իրավունքների, փոխհատուցման տարբերակների, այլընտրանքային զարգացումների և վերաբնակեցման ժամանակացույցերի և այլնի վերաբերյալ,
- (iii) Կացարանով ապահովվածության և եկամտի մակարդակի փոփոխություն,
- (iv) Կացության որևէ կարգավիճակ չունեցող բնակիչների ռեաբիլիտացիոն աշխատանքներ,
- (v) Գույքի գնահատում,
- (vi) Բողոքների ներկայացման ընթացակարգեր,
- (vii) Փոխհատուցման վճարումներ և
- (viii) ԱԵԱ բավարարվածության աստիճանը տարաբնակեցումից հետո:

45. ԱՄՄ-ը ՀՕՏՕ-ի իրականացման ավարտից մոտ մեկ տարի հետո պետք է գնահատում իրականացնի: Այդ ուսումնասիրության նպատակն է՝ պարզել, թե արդյոք ՏՕ-ի նպատակներն իրականացվել են, թե ոչ: Էականորեն ազդեցության ենթարկված անձանց շրջանում ՀՕՏՕ-ի նախապատրաստման փուլում կատարված ՍՏՈՒ և Աղքատության ու սոցիալական հարցերի գնահատման (ԱՄՀԳ) ելակետային տվյալները պետք է օգտագործվեն գնահատելու համար ծրագրի իրականացումից առաջ և հետո առկա պայմանները: Եթե ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՕՏՕ-ի նպատակները չեն իրականացվել, ԱՄՄ-ը ԱԵԱ համար պետք է առաջարկի համապատասխան լրացուցիչ աջակցություն:

ԺԲ. ՀՕՏՕ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

46. ՀՕՏ-ի գործողություններում ներգրավված ԻԳ/ԾԻԿ համապատասխան աշխատակազմը երկօրյա կողմնորոշիչ դասընթաց և վերապատրաստում պետք է անցնի ԱԶԲ-ի տարաբնակեցման քաղաքականության, դրա կառավարման և ՀՕՏ Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերաբերյալ: Վերապատրաստումը պետք է իրականացվի տարաբնակեցման միջազգային և տեղական մասնագետների կողմից: Վերապատրաստումը պետք է ընդգրկի հետևյալ թեմաները.

- i) Հողամասերի օտարման սկզբունքներ և ընթացակարգեր,
- ii) Հանրային խորհրդատվություն և մասնակցություն,
- iii) Իրավունքներ և փոխհատուցման ու նպաստների վճարման մեխանիզմներ,
- iv) Բողոքների քննարկում և
- v) Տարաբնակեցման գործողությունների մոնիտորինգ:

ԺԳ. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

47. ՏՕ-ի նախապատրաստման և իրականացման բոլոր ծախսերը, ներառյալ փոխհատուցման և ՀՕՏ-ի վարչարարության արժեքը, կհամարվեն ծրագրի արժեքի անբաժանելի մասը և կտրամադրվեն Հայաստանի կառավարության, մասնավորապես՝ ՏԿՆ-ի կողմից՝ որպես հակառակ կողմի ֆինանսավորում: Յուրաքանչյուր ՀՕՏՕ պետք է ներառի բյուջեին վերաբերող բաժին, ներառյալ՝ ա) բոլոր ազդեցության ենթարկված առարկաների համար միավորի փոխհատուցման դրույքաչափերը և նպաստները, բ) միավորի փոխհատուցման դրույքաչափերի

հաշվարկման մեթոդաբանության և գ) փոխհատուցման բոլոր ծախսերի մասով արժեքների աղյուսակը, ներառյալ վարչական ծախսերը և չնախատեսված ծախսերը: Արտաքին մոնիտորինգի գործառնությունների և ուսումնասիրությունների և ՀՕՏ-երի նախապատրաստման ծախսերը կարող են հատկացվել վարկի շրջանակներում:

48. Լինելով ծրագրի պատասխանատուն՝ ՏԿՆ-ն պատասխանատու է ՏՕ-երի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսների ժամանակին հատկացման համար: Հատկացումները պետք է վերանայվեն տարին երկու անգամ՝ հիմնվելով ՀՕՏ-երում նշված բյուջետային պահանջների վրա: Համաձայն ՀՕՏ-ի ֆինանսական հոսքերի՝ փոխհատուցման և վերականգնման բյուջեն պետք է ՏԿՆ-ի կողմից վճարվի անմիջապես ԱԵԱ:

ԺԴ. ՀՕՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

49. Հայաստանում առկա փորձի հիման վրա ՀՕՏ-ի մշակումն ու իրականացումը կարող է տևել մինչև մի քանի ամիս: ՀՕՏ-ի մշակման և իրականացման ուղղությամբ ՀՕՏ-ին առնչվող հիմնական քայլերը ամփոփված են ստորև բերված Շրջանակ 1-ում:

ՇՐՋԱՆԱԿ 1. ՀՕՏ-Ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

<u>Քայլ</u>	<u>Գործողություն</u>	<u>Պատասխանատվություն</u>
Ա) ՀՕՏ ՄՇԱԿՈՒՄԸ		
1	Նախագծի աղքատության և սոցիալական ազդեցությունների գնահատում	Խորհրդատու
2	Աշխատանքային նախագծի ամփոփում	Նախագծման խորհրդատուներ
3	Մշակել հաշվառման/ցուցակագրման և ՎԶՀ-ի ձևաթղթեր, վերապատրաստել հաշվառում/ցուցակագրում և ՎԶՀ իրականացնող տեղական աշխատանքային խմբերին և հաստատել տեղական ինքնակառավարման մարմինների հետ աշխատանքների համակարգում	Խորհրդատու
4	Նախագծի ազդակիր տարածքի կադաստրային և հողատարածքների քարտեզների հավաքագրում	Խորհրդատու/ԻԳ/ՕԻԿ
5	Ստուգել նախագծի ազդակիր հողատարածքների մասին տվյալները, թարմացնել կադաստրային քարտեզները և իրականացնել ազդեցությունների և գնահատման ուսումնասիրություն՝ տույժի չափման նպատակով իրականացված մանրամասն հետազոտություն	Խորհրդատու/ԻԳ/ՕԻԿ-ՍՏՍ
7	Իրականացնել հանրային խորհրդատվություններ	Խորհրդատու/ԻԳ/ՕԻԿ-ՍՏՍ
8	Բանակցություններ ԱԵԱ հետ	Խորհրդատու/ԻԳ/ՍՏՎ
9	Հաշվառման/ցուցակագրման արդյունքում հավաքագրված տվյալները ներառել ՏՕ-ի մեջ	Խորհրդատու
10	ՀՕՏ-ն ներկայացնել ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի հաստատմանը	Խորհրդատու/ՏԿՆ/ՕԻԿ/ԱԶԲ
11	Տեղեկությունների տրամադրում	Խորհրդատու/ԻԳ/ՕԻԿ
Բ) ՀՕՏ ամփոփում (աշխատանքային նախագծի մշակում)		
1	Աշխատանքային նախագիծ՝	Նախագծման

Քայլ	Գործողություն	Պատասխանատվություն
Ա) ՀՕՏՕ ՄՇԱԿՈՒՄԸ		
		խորհրդատու
2	Աշխատանքային նախագծի հիման վրա վերանայել ազդեցությունները և ԱԵԱ ցուցակը	խորհրդատու/ ԻԳ/ԾԻԿ/ՄՏՎ
3	Նորացված դրույքաչափերի հիման վրա վերանայել ծախսերը	խորհրդատու/ ԻԳ/ԾԻԿ/ՄՏՎ
4	Հնարավորության դեպքում իրականացնել հողերի կարգավիճակի օրինականացում	խորհրդատու/ ԻԳ/ԾԻԿ/ՄՏՎ
5	Վերջնական ՀՕՏՕ մշակում	խորհրդատու/ ԻԳ/ԾԻԿ
6	ԱԶԲ-ի հաստատում	ԱԶԲ
7	ՏՕ հրապարակում. ՏՕ-ի և տեղեկատվական բրոշյուրների տարածում Հայաստանի այն համայնքներում, որտեղ իրականացվելու է ծրագիրը՝ միաժամանակ հրապարակելով ՏՕ-ի անգլերեն տարբերակը ԱԶԲ կայքում	ԻԳ/ԾԻԿ /խորհրդատու/ՄՏՎ /ԱԶԲ
8	Շինարարական պայմանագրի ստորագրում	ԱԶԲ/ՏԿՆ
Գ) ՏՕ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ		
1	Պայմանագրերի ստորագրման հաստատում	ԱԶԲ
2	Փոխհատուցումների գործողությունների պլանի մանրամասն ժամանակացույց	ԻԳ/ՏԿՆ
3	ԱԵԱ վերաբնակեցման ծանուցումների տրամադրում	ՏԿՆ/ԻԳ/ԾԻԿ/ՄՏՎ
4	Հողամասերի փոխհատուցման գումարների տրամադրում	ՏԿՆ/ԻԳ/ԾԻԿ/ՄՏՎ
5	Այլ փոխհատուցումների և աջակցության/վերականգնման գումարների տրամադրում	ՏԿՆ/ԻԳ/ԾԻԿ/ՄՏՎ
6	Օտարման ենթակա կառույցների/գույքի քանդում/տեղափոխում	ՏԿՆ
7	ՏՕ իրականացման ուսումնասիրություն համապատասխանության հաշվետվության միջոցով	ՏԿՆ/ԻԳ/ԱՄՄ/ԱԶԲ
8	Շինարարական աշխատանքներին անցնելու մասին ծանուցում, եթե ՏՕ-ի իրականացումը գնահատվում է բավարար	ԱԶԲ/ՏԿՆ
Դ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ		
1	ՀՕՏՕ-ի անկախ գնահատում	ԱՄՄ
Ե) ՑԻԿԼԱՅԻՆ/ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
1	Ներքին մոնիտորինգ. եռամսյակային հաշվետվություններ ԱԶԲ-ին	ԻԳ/ԾԻԿ
2	Արտաքին մոնիտորինգ. կիսամյակային հաշվետվություններ ԱԶԲ-ին	ԱՄՄ/Վերահսկող խորհրդատու
3	Բողոքների քննարկում/վարույթներ	ՏԿՆ/ԻԳ/ԾԻԿ/Դատարան
4	Միջգերատեսչական համակարգում և կապ ԱԵԱ հետ	ՏԿՆ/ԻԳ/ՄՏՎ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ՏԻՊԱՑԻՆ ՀՕՏՕ-Ի ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Նախագծերի ՀՕՏ հարցերը

Այս բաժնում նկարագրվում են ՀՕՏ պահանջող նախագծերի գործողությունները, հողամասերի օտարման ազդեցությունները նվազագույնի հասցնելու այլընտրանքային տարբերակները (եթե այդպիսիք կան), ինչպես նաև վերլուծվում են ազդեցությունների անխուսափելիության պատճառները:

2. Հողի օտարման և տարաբնակեցման աշխատանքների շրջանակները

Այս բաժնում նկարագրվում է ազդեցությունների նախապատրաստումը (իրականացնողն ու նախաձեռնման ժամկետը) և նշվում է յուրաքանչյուր տեսակի ազդեցության լիարժեք գնահատումը և ազդեցության ենթակա անձանց հաշվառումը՝ ՀՕՏ-ին համապատասխան: Այս բաժնում նաև ներառված է յուրաքանչյուր ազդեցության ենթարկված առարկայի միավորի փոխհատուցման դրույքաչափի և լրահատկացումների/նպաստի որոշման մեթոդաբանությունը:

3. Խոխհատուցումները, քաղաքականության շրջանակը և իրավունքները

ՀՕՏ-ի հիման վրա այս բաժնում նկարագրված են փոխհատուցում ստանալու իրավունքը և փոխհատուցման դրույքաչափերը:

4. Խորհրդատվության տրամադրումը և մասնակցությունը բողոքների քննարկման գործընթացին

Այս բաժնում ամփոփված են ՀՕՏ-ում նկարագրված ազդեցության ենթակա անձանց բողոքների քննարկման ընթացակարգերը, ինչպես նաև նկարագրված են տվյալ ենթածրագրի շրջանակներում իրականացված խորհրդատվության տրամադրման, մասնակցության և բողոքների քննարկման գործընթացները:

5. Փոխհատուցում, վերաբնակեցում և եկամտի վերականգնում

Այս բաժնում նկարագրված են իրականացվելիք եկամտի վերականգնման միջոցառումները:

6. Ինստիտուցիոնալ շրջանակները

Այս բաժնում նկարագրված են այն ինստիտուցիոնալ միջոցառումները, որոնք հիմնված են սույն ՀՕՏ-ի վրա: Այն ներառում է հիմնական գործառույթների և պլանավորման, բանակցությունների, խորհրդատվության տրամադրման, հաստատման, համակարգման, իրականացման, ֆինանսավորման, մոնիտորինգի, ինչպես նաև հողի օտարման ու տարաբնակեցման գնահատման աշխատանքներին վերաբերող հարցեր:

7. Տարաբնակեցման բյուջե և ֆինանսավորում

Այս բաժինը մշակում է յուրաքանչյուր ազդակիր առարկայի փոխհատուցման միավորի դրույքաչափը և գնահատում է նախագծի ՀՕՏ բյուջեն: ՀՕՏ բյուջեն պետք է ներառի հողամասի օտարումը և դրա հետ կապված հնարավոր ծախսերը. բերքի դիմաց փոխհատուցման լրահատկացումների համար պահանջվող գումարները, մոնիտորինգի և գնահատման ծախսերը, ինչպես նաև վարչական ծախսերը, որը պետք է համապատասխանեցվի գների սղաճին և կիրառելի հարկերին:

8. Իրականացման ժամանակացույցը

Այս բաժնում ներկայացվում է ՀՕՏ-ի գործառույթները շինարարական աշխատանքների իրականացման հետ կապող ՀՕՏ-ի գործընթացների ժամանակացույցը:

9. Մոնիտորինգ և գնահատում

Այս բաժնում ներկայացվում են ընթացիկ և անկախ մոնիտորինգի և գնահատման գործողությունների հատուկ միջոցառումները:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Մարգարյան